

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԲԱՐԻՋԻ ՆՕԹՐԸ ՏԱՄԸ

Ժայթփե՛ արգաւանդ հողէն վեր, ինչպէս բոցի փունջ մը պերն,
Մա՛յր եկեղեցիս. ու ցըցե՛, իբրեւ երգ մ'աստուածային,
Երփնապակիներդ մոգիչ, ուր մեր հոգիներն վառին,
Ու նետդ որ երկինքն ի վեր կ'անգայսի սլացումով մ'անվերջ:

Գուն ցեղի մը մեծ դարաւոր նիգին հուժկու յիշակերս,
Սլափի խուրձերուդ մէջ կը բըռնուի անդրաշարհն անհուն.
Գըծոխփի կընճիւր կը խորումի մէջ փու ցնորհներուն,
Երկնային քեւի քափն է որ կ'առնէ վեր փու կամարներդ:

Կողերուդ միսին մէջ կը սարսըռայ երազ մ'ոսկեթով.
Ու, եղեմներուն լուսաւոր՝ սիրոյ սաստիկ կարօտով,
Մըղուած ներհըզօր իղձերէն կուրծփիդ, որ կը բաբախէ,

Կ'երկարես քեւերդ, իբրեւ ուղեցոյց, խելայեղօրէն,
Գէպի երկնային վերաքելումիդ կայանն հրեղէն,
Հըսկայ, որ ծունկի եկած ես շապկիդ մէջ փու ժանեակէ:

Թրգմ. Թ. Ե. Գ.

RAOUL GUYADER (Croyances Mortes)

ՀԱՂՈՐԴՈՒԱԾ ԲԵՐԿՐՈՒԹԻՒՆ

Հաղորդըւած բերկրութիւն, ո՛չ թէ բըխած իմ սրբէս,
Այլ բերկրութիւն՝ որ կու գայ ուրիշներու հոգիէն,
Երբ մանկութեան ձայնին մէջ որ կը հընչէ լուսեղէն,
Անհուն գանձեր կը բացուին կախարդավառ ու անես:

Ուրախութիւն՝ որ գուցէ ասեմօք ի'մրս էիր,
Ու ես բընա՛ւ փու շունչէդ լեցուիլըս չե՛մ իսկ յիշեր,
Ճըրա՛գ մ'էիր որ սիրոյ խորհուրդին մէջ կ'առկայծէր,
Ու ես կարօ՛ս եմ քեզի իբր աղօթփի սրճավիր ...

Հիմա ջրղու մը ձայնէն ինծի կու գաս երկնաւէս,
Կամ նայուածփի մը ծիրին կը բանաս հուրն իմ հոգւոյս,
Ու կը զգամ որ ամէն յոյս կ'անդորրանայ սրբիս հետ ...

Քու երազիդ կը հասնիմ գիծերուն վրայ ձեռներուս,
Կը տեսնեմ որ դիւքանփիդ բացուեր է դուռն ոսկեղէն,
Ու զիս կանչող մը չի կայ մութ ֆարացած դէմքերէն ...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ